ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Զարգացնող առարկայական միջավայրի ստեղծումը մանկապարտեզում որպես նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական դաստիարակության պայման

Վերապատրատվող՝ Սիրանուշ Ալեքսանյան Զարզանդի
Արտաշատ համայնք Նարեկ գյուղ «Արևիկ» մանկապարտեզ
Վերապատրաստող, դասախոս՝ Գայանե Մարտիրոսյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……..3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ……..4

1.1 Էկոլոգիական կրթության ոլորտին վերաբերող հիմնական հասկացությունների մեկնաբանումներ …….4

1.2 Էկոլոգիական դաստիարակության խնդիրները ……..…..….8

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ ……..…...10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական կրթության գերակա խնդիրներից է: Նախադպրոցական տարիքը երեխայի ճանաչողական ունակությունների ձևավորման ամենանպաստավոր շրջանն է: Ուստի երեխայի էկոլոգիական դաստիարակությունն անհրաժեշտ է սկսել վաղ տարիքից՝ նրա մանկապարտեզ ընդունվելու պահից: Նախադպրոցական տարիքի երեխայի էկոլոգիական դաստիարակության նպատակը բնության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորումն է: Իսկ դաստիարակի խնդիրը երեխայի մեջ վաղ տարիքից բնության և շրջակա միջավայրի վերաբերյալ նախնական պատկերացումներ ձևավորելն է: Անհրաժեշտ է դեռևս այդ շրջանից երեխային սովորեցնել, որ կենդանիներն ու բույսերը նույնպես շնչավոր էակներ են: Նրանք շնչում են, ջուր խմում և, ամենակարևորը, վնասվելիս ցավ են զգում այնպես, ինչպես մարդիկ: Ծառի կոտրված ճյուղը կամ ծաղկի վնասված ցողունը լաց է լինում և օգնություն խնդրում: Փոքրիկները բառացիորեն ընկալելով ամեն ինչ՝ կարեկցանքի զգացում են ապրում, ինչը նրանց կարող է ուղեկցել ամբողջ կյանքի ընթացքում:

Էկոլոգիական դաստիարակությունը շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց է, ինչը երեխաներին հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում: Էկոլոգիական կրթությունն անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված երեխաների էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը, բնապահպանական և բնօգտագործման ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի կայացմանը:

Կարևոր նշանակություն ունեն էկոլոգիական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները մանկապարտեզում: Երեխաները առօրյա գործունեության միջոցով ստանում են կոնկրետ, գործնական գիտելիքներ՝ շրջապատող բնության, առարկաների ու երևույթների վերաբերյալ, ինչը նպաստում է բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի և գեղեցիկը գնահատելու կարողության ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 1. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

1.1 Էկոլոգիական կրթության ոլորտին վերաբերող հիմնական հասկացությունների մեկնաբանումներ

«Էկոլոգիա» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է գերմանացի հանրաճանաչ գիտնական՝ Էռնեստ Հեկկելի կողմից և ներկայացվել որպես գիտություն սեփական տան, կացարանի մասին: Էկոլոգիա հունարենից թարգմանաբար նշանակում է «oicos»-տուն, կացարան և «logos»-գիտություն, այն է՝ գիտություն բնակատեղի մասին: Մարդկության «տունը» Երկիր մոլորակն է, որն այսօր խնամքի և պահպանման կարիք ունի:

Մինչև 20-րդ դարի 90-ական թվականներն էկոլոգիական կրթության համակարգում գերակայող էր մարդակենտրոն (էգոկենտրոն) մոտեցումը, համաձայն որի՝ մարդը բնության տերն ու տիրակալն է, հետևաբար կարող է վերափոխել և ծառայեցնել բնության բարիքները սեփական կարիքները բավարարելու գործընթացին: Բնությունը և ընդհանրապես աշխարհը մարդու համար են: Նշված տրամաբանությամբ բնությունը կարելի է բաժանել երկու մասի՝ օգտակար և վնասակար: Մարդն ապրում է՝ լայնորեն սպառելով բնության մեջ առկա օգտակարը և ոչնչացնելով վնասակարը: Նշված տրամաբանության գերակայության պայմաններում գնալով պակասում և դժվարությամբ են վերականգնվում բնության բարիքները: Բնության հանդեպ սպառողական վերաբերմունքին փոխարինելու է գալիս էկոկենտրոն մտածելակերպը, ըստ որի՝ բնությունը միասնական համակարգ է, իսկ մարդը՝ նրա հավասար մասնիկը: Բնությունը էկոհամակարգ է և իրենից ներկայացնում է ողջ կենդանի աշխարհի՝ ֆաունայի և ֆլորայի, այդ թվում և մարդու, նրանց կենսամիջավայրի ֆունկցիոնալ միասնություն:

Այսօր Երկիր մոլորակը կանգնած է էկոլոգիական աղետի եզրին: Մեր ընդհանուր «տունը» կարող ենք փրկել բոլորս միասին: Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը ներկա ժամանակներում գոյապահպանման պահանջ է՝ ուղղված «բնություն-մարդ» փոխհարաբերությունների կարգավորմանը՝ մարդկային բնապահպան գործունեության միջոցով: Մարդու բնապահպան գործունեության արդյունքում պահպանվում և ապահովվում է մարդկության հետագա գոյությունը:

Բնապահպան գործունեությունն ուղղված է գոյապահպան կենսագործունեությանը: Իսկապես, պահպանելով բնությունը, մարդիկ պահպանում են իրենց գոյությունը:

Էկոլոգիական կրթության սկիզբը դրվում է նախադպրոցական տարիքում՝ հատուկ կազմակերպված էկոլոգիական կամ գոյապահպան դաստիարակության միջոցով: Էկոլոգիական դաստիարակությունը երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորման, էկոլոգիական վարքագծի և մշակույթի (վարվելակերպի) դաստիարակության գործընթաց է: Էկոլոգիական դաստիարակության նպատակը վաղ տարիքից բնության հետ երեխայի միավորումն է, բնության հանդեպ պատասխանատու հոգատար վերաբերմունքի ձևավորումը:

Մի շարք մանկավարժների (Ս.Ն.Նիկոլաևայի, Ե.Ֆ. Տերենտևայի, Լ.Յ. Լավրիենկոյի, Տ.Վ.Պոտապովայի և այլոց) հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխան նախադպրոցական տարիքում արդեն ընկալում և հասկանում է բնության մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ շղթայական կապերը, հետևաբար ընդունակ է պատկերացնելու բնության ամբողջականությունը: Միևնույն ժամանակ նախադպրոցականը, ըստ տարիքային առանձնահատկությունների, հուզականորեն է ընկալում բնության գեղեցկությունն ու անկրկնելիությունը: Նա հաճախ շնչավորում է նույնիսկ անշունչ առարկաներն ու բնության երևույթները: Նա պատրաստ է բնության ցանկացած փոքրիկ էակի մեջ տեսնել բնության ամբողջականությունն ու գեղեցկությունը: Երեխայի աշխարհաճանաչումը սկսվում է բնաճանաչողությունից: Նախադպրոցականը հաճույքով ուսումնասիրում է իրեն շրջապատող կենդանիներին և բույսերը, փորձում հասկանալ նրանց կենսակերպի առանձնահատկությունները և էական տարբերությունները մարդկանցից: Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցականի անձի ներդաշնակ ձևավորման կարևորագույն գործոն է:

Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում իրենից ներկայացնում է մանկավարժական նպատակային ներգործություն՝ ուղղված երեխաների էկոլոգիական մշակույթի (վարվելակերպի) ձևավորմանը, ինչն արդյունք է էկոլոգիական գիտակցության ու մտածողության և դրսևորվում է շրջակա միջավայրի հանդեպ որոշակի հուզական վերաբերմունքով և բնապահպան գործունեությամբ: Էկոլոգիական գիտակցությունը նախադպրոցական տարիքում

զարգանում է բարոյական, տնտեսագիտական և գեղագիտական գիտակցության հետ մեկտեղ:

Բակ-պարտեզը որպես ուսումնական միջավայր

Բակ-պարտեզը զարգացնող, առարկայական միջավայրի տարր է: Այնտեղ է կազմակերպվում էկոլոգիային համակցված պարապմունքներ, խաղեր և աշխատանքներ: Ցանկացած զարգացնող միջավայր բաղկացած է բազմաբովանդակ աշխատանքային կենտրոններից (խաղային գոտիներից), որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր որոշակի դերը:

Քանի որ նախադպրոցական հաստատությունները տարբերվում են իրենց նյութական հնարավորություններով ուստի նրանց նպատակներն ու խնդիրները պետք է բխեն տվյալ մանկավարժական կոլեկտիվի հնարավորություններից:

Բակ-պարտեզը, որպես ուսումնադաստիարակչական միջավայր, անհրաժեշտ է ներդնել երեխայի համար արժեք ներկայացնող համակարգում (մայր, խաղալիք, տուն) բնության բազմաատեսակ պայմաններում և մարդկային բարոյական չափանիշներում (բարություն, իմաստություն, կարեկցանք): Նշանակում է երեխաներին հաղորդակից դարձնել համամարդկային արժեքներին, ձևավորել կողմնորոշում ոչ միայն բնության, այլ նաև ամբողջ աշխարհի հանդեպ:Այդ դաստիարակությունը սկսում է մանկապարտեզ գալու առաջին իսկ պահից:

Բակ-պարտեզում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որ կնպաստի՝

- Երեխաների ճանաչողական ունակությունների զարգացմանը (պայմաններ նոր ճանաչողության գործունեության, փորձարկումների, բնական նյութերով կենդանի և անկենդան բնության մեջ անընդմեջ դիտումների, հետաքրքրող հարցերի պատասխանների որոնման և նոր հարցադրումների կառուցման համար):
- Երեխաների գեղագիտական ունակությունների զարգացմանը (ուշադրությունը բևեռել շրջապատող բնության օբյեկտների, արհեստականի փոխարեն դրանց առաջնայնության):
- Բնության գեղեցկությունը, բազմատեսակ գույներն ու ձևերը տեսնելու կարողության զարգացումանը:

- Երեխաների բարոյական որակների ձևավորմանը: Կենդանի օբյեկտների խնամքի և ամենօրյա շփման պայմանների ստեղծում, շրջապատող բնության օբյեկտների նկատմամբ հուզական վերաբերմունքի,պահպանել ցանկանալու, կարողությունների ձևավորում, շրջակա միջավայրի պահպանության, պատասխանատվության դաստիրակմանը:

Միջավայրը

Կանաչապատ, անվտանգ, խնամված բակ-պարտեզ՝ տաղավարներ, լողավազան, ճոճանակներ, հեծանիվներ, ինքնաշեն խաղալիքներ, ցեխով, կավով խաղալու, ծեփլու տարածք, մանր ավազով լցված ավազան, նստարաններ: Երեխայի առօրիայի մեծ մասն անցնում է բակում: Երեխաները սահում են սահարաների վրա, ճոճվում են ճոճանակներով, թռչում, մագլցում, բարձրանում, տարբեր բակային խաղեր են խաղում, մրցում են, ով է բարձր թռչում, արագ վազում և այլն: Այս ամենը ոչ միայն նպաստում է երեխայի ֆիզիկական զարգացմանը, այլ մեծացնում է նրա ֆիզիկական ակտիվությունը, նպաստում օրգանիզմի կոփմանը, շարժողական ապարատի զարգացմանը:

Ամռան ամիսներին առանց մանկական լողավազանի չի կարող բակը լիարժեք զարգացնող միջավայր համարվել: Հայաստանի շոգ ու տոթ պայմաններում առանց լողավազանի անհնար է երեխայի առողջության պահպանման մարմնի կոփելու, ֆիզիկական բնականոն զարգացման մասին խոսելը: Լողալ սովորելով նա ազատվում է մի շարք վախերից , ավելի ազատ ու ինքնավստահ է դառնում, ավելի ճկուն մտքով ու մարմնով զարգանում է շարժումների կորդինացիան:[1]

[1] Բակ-պարտեզը որպես ուսումնական միջավայր | Լուսինե Հովհաննիսյան (wordpress.com)

1.2 Էկոլոգիական դաստիարակության խնդիրները

Էկոլոգիական դաստիարակության բովանդակային դաշտը մշակվում է՝ հիմք ընդունելով նախկին կրթական ծրագրի «Բնության հետ ծանոթացում» բաժինը: Հստակեցվում է նախադպրոցահասակ երեխաների կողմից հասկանալի և ընկալելի բնագիտական գիտելիքների ոլորտը: Էկոլոգիական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների բովանդակության ծավալը և երեխաներին ներկայացվող կենսաբանական ոլորտներն այսօր փոփոխման չեն ենթարկվել: Սակայն սկզբունքորեն փոխվել են բնության վերաբերյալ գիտելիքների միավորման եղանակները և մատուցման ձևերը: Համաձայն դրա՝ բնության մասին գիտելիքները ձեռք են բերել էկոլոգիական ուղղվածություն: Այսպիսով, նախադպրոցական տարիքում երեխաներին փոխանցվում են էկոլոգիական գիտելիքներ՝ հետևյալ թեմաներով.

- Բնության ինքնարժեքը և բնության անգնահատելի հարստությունը
- Բնության ինքնակարգավորման և վերականգնման գործառույթները
- Բուսական աշխարհի (ֆլորայի) բազմազանությունը, ստորակարգ և բարձրակարգ բույսերի միասնությունը
- Կենդանական աշխարհի (ֆաունայի) բազմազանությունը, կենդանիների կենսակերպը և կենսամիջավայրի պայմանները
- Բուսական և կենդանական աշխարհների փոխպայմանավորվածությունը, դրանց կապը կենսամիջավայրի պայմանների հետ
- Մարդն իբրև կենդանի էակ, նրա կենսամիջավայրը և առողջ կենսակերպի հիմնական պայմանները
- Մարդը և բնական պաշարները, դրանց օգտագործման եղանակները:[2]

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն իրականացվում են նշված բովանդակության հիման վրա և ձևակերպվում հետևյալ կերպ.

1. Էկոլոգիական տարրական գիտելիքների հիման վրա բնության երևույթների մասին պատկերացումների ձևավորում:
2. Բնության գեղեցկությունը գնահատելու կարողությունների, գեղեցիկ վարքագծի և բնության գրկում դրական սովորույթների ձևավորում:

[2] Ս. Մարության, Ա. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008թ., էջ 87:

3. Բնության հանդեպ վերաբերմունքի բարոյական կողմը գնահատելու, ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողությունների ձևավորում:
4. Էկոլոգիական գիտակցության ձևավորում՝ հուզակամային ոլորտի և սոցիալական փորձի հարստացման եղանակով:
5. Էկոլոգիական վարվեցողության կամ մշակույթի ձևավորում՝ բնության հանդեպ հոգատարության և արժեքային դիրքորոշման ձեռքբերման միջոցով:
6. Էկոլոգիական (գոյապահպան) մտածելակերպի, աշխարհընկալման ձևավորում՝ բնապահպան, հետևաբար և գոյապահպան գործունեության կազմակերպման և ծավալման եղանակով:

Նշված խնդիրների հաջորդաբար իրականացման պարագայում նախադպրոցականը սովորում է՝ հոգատարությամբ և ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել բնությանը, գիտակցում է մարդկային գործոնի դերը «բնություն-մարդ-հասարակություն» հարաբերակցությունում: Երեխայի մեջ առաջանում է բնության հետ համերաշխ ապրելու ցանկություն, այն չվնասելու և տարբեր անցանկալի ներգործություններից պահպանելու գիտակցություն, ինչպես նաև աստիճանաբար ձեռք է բերվում բնության բարիքները խնայողաբար օգտագործելու սովորույթ:

Էկոկրթության համակարգի իրականացման համար կարևոր է զարգացնող միջավայրի ճիշտ կազմակերպումը: Զարգացնող միջավայրը պետք է ներառի բոլոր բաղադրիչների իրականացումը՝ ճանաչողական, բարոյական, նորմատիվային և գործնական: Էկոկրթության նպատակին հասնելու համար պետք է ճիշտ համակցվեն գործնական մեթոդը, ինքնուրույնությունը և երեխաների ակտիվությունը: Անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել բնական միջավայրը՝ ձևավորելու բնության հետ հարաբերվելու բարեհարմար եղանակներ, և դա անել զգացմունքների, ճանաչողության ու գործունեության միջոցով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ

Մանկապարտեզում բնապահպանական թեմաներով պարապմունքներին երեխաները մասնակցում են մեծ ակտիվությամբ և մեծ հետաքրքրություն ցուցաբերում: Պատճառը մեկն է. բնությունն անսպառ է և տալիս է բազմազան վառ ու հետաքրքիր գիտելիքներ, առաջացնում բուռն հետաքրքրություն՝ աշխարհի ու կյանքի նկատմամբ: Նման պարապմունքների ընթացքում երեխան շփվում է կենդանի էակների, բույսերի հետ, ուսումնասիրում մոտիկից, կատարում հետևություններ, տեսնում արդյունքը: Դաստիարակները երեխաներին հաղորդում են մարդկության կողմից մշակված և կյանքում վավերագրված աշխարհաճանաչության, աշխարհաընկալման միջոցներն ու եղանակները: Բնապահպանական թեմաներով պարապմունքները դաստիարակներին լայն հնարավորություն են ընձեռում՝ բնապահպանական գիտելիքներ, ունակություններ և հմտություններ հաղորդելու երեխաներին: Այս պարագան էլ ենթադրում է ուշադրության, մտածողության, կամային հատկանիշների և հոգեկան գործընթացների ձևավորում ու զարգացում:

Ծանոթացում բանջարեղենին

Նպատակը՝ ձևավորել գիտելիքներ բանջարեղենի մասին (համ, հոտ, ձև, գույն), հարստացնել երեխաների բառապաշարը:

Ջննական պարագաներ՝ կաղամբ, սոխ, գազար, բազուկ, կարտոֆիլ, լոլիկ, կտրատելու համար տախտակ, դանակ, ինչպես և անձրև, արև, ցնցուղ, մարդ պատկերող նկարներ:

Պարապմունքի ընթացքը՝ Խաղ «Հրաշալի պարկ»:

Դաստիարակ՝ Երեխաներ, այսօր մեզ հյուր են եկել տիկնիկները: Նրանք քանի՞սն են (շատ, քիչ):

Դաստիարակ՝ նրանք բերել են մի պարկ բանջարեղեն, որը հավաքել են բանջարանոցից և խնդրում են մեզ՝ իրենց համար ճաշ եփել:

Դաստիարակը հերթականությամբ հրավիրում է երեխաներին և առաջարկում պարկից հանել բանջարեղենը: Ամեն անգամ միասին անվանում են բանջարեղենը, ներկայացնում գույնը, ձևը, համեմատում միմյանց հետ:

Դաստիարակ՝ Իսկ տիկնիկները որտեղի՞ց են հավաքել բանջարեղենը։

-Որտե՞ղ է աճում բանջարեղենը։

-Ո՞վ է ջերմացրել, որ լավ աճի (միաժամանակ երեխային առաջարկում է գտնել արևի նկարը և ցույց տալ)։

- Ո՞վ է ջրել բանջարեղենը, որպեսզի լավ աճի (առաջարկում է ցուցադրել անձրև պատկերող նկարը)։

-Իսկ երբ անձրև չի լինում, ո՞վ է ջրում բանջարեղենը(առաջարկում է ցույց տալ մարդ և ցնցուղ պատկերող նկարը)։

-Ի՞նչ են բերել տիկնիկները մեզ։

-Ինչու՞ են բերել այդ բանջարեղենը։

Դաստիարակը տախտակի վրա կտրատում է բանջարեղենը, առաջարկում երեխաներին օգնել իրեն՝ կտրատած բանջարեղենը կաթսայի մեջ լցնելու, ճաշ եփելու և տիկնիկներին հյուրասիրելու համար։[3]

Էկոլոգիական դաստիարակությունը՝ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման միջոց

Հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների և դրանց առաջընթացի հետ կապված կատարելագործվում են նախադպրոցականի դաստիարակության խնդիրները։ Դրանք վերաբերում են՝ առողջ ապրելակերպին, արժեքային համակարգի, իմացական կարողությունների ձևավորմանը, բարոյական, աշխատանքային, տնտեսական, բնապահպանական դաստիարակությանը։

Փորձենք ներկայացնել նախադպրոցականի էկոլոգիական կրթության հիմնահարցերը և ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը տվյալ բնագավառում։

Էկոլոգիական կրթության հիմքերը դրվում են նախադպրոցական տարիքում՝ հատուկ կազմակերպված բնապահպանական դաստիարակչական աշխատանքների միջոցով։ Էկոլոգիական կրթությունը նպաստում է երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորմանը, էկոլոգիական վարքագծին։

[3] Գ. Մարտիրոսյան. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, Երևան, 2007թ., էջ 7։

Էկոլոգիական դաստիարակության նպատակը երեխայի՝ բնության հետ ներդաշնակ կենսահաստատումն է վաղ տարիքից՝ նրա մեջ ձևավորելով պատասխանատվություն բնության հանդեպ: Էկոլոգիական դաստիարակության միջոցով հարկավոր է երեխայի մեջ արմատավորել մարդու և բնության փոխհարաբերությունների գիտակցումը: Երեխան պետք է հասկանա, որ մարդը ինչպես բնության օգտագործողն է, այնպես էլ դրա պահպանողը, և հարկավոր է հնարավորինս խնայողաբար օգտագործել բնությունը՝ մտածելով ապագայի մասին: Էկոլոգիական դաստիարակության պարապմունքները կոչված են ապահովելու երեխաների գիտելիքները բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, մարդու և բնության փոխհարաբերությունների, բնական պաշարների օգտագործման եղանակների մասին: Երեխան գիտակցաբար պետք է ցանկություն ունենա պահպանելու բնությունը: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել գնահատել բնության գեղեցկությունը: Այդ կերպ հնարավոր կլինի ձևավորել էկոլոգիական գիտակցություն:

Այժմ ներկայացնում ենք համալիր պարապմունքի կառուցվածքը, որի կիրառմամբ հնարավոր կլինի նախադպրոցականի մեջ պատկերացում ձևավորել արևի, լուսնի և այլ մոլորակների վերաբերյալ:

Արև, լուսին և այլ մոլորակներ

Ինտեգրված պարապմունք

Անհրաժեշտ է նախապես երեխաների մեջ գաղափար ձևավորել արեգակնային համակարգի մասին. արևը աստղ է, հսկայական տաք գունդ, որն ունի բարձր ջերմաստիճան և բոլոր կողմերով ճառագում է լույս և ջերմություն: Արևը պտտվում է ինքն իր, իսկ մոլորակները՝ նրա շուրջը:

Արեգակին ամենամոտ մոլորակը Մերկուրին է, այնուհետև Վեներան, Երկիրը (մեր մոլորակը), Մարսը և մյուս մոլորակները: Յուրաքանչյուր մոլորակ պտտվում է Արեգակի շուրջը:

<u>Անհրաժեշտ պարագաներ</u>

Արեգակնային համակարգի քարտեզ կամ գրաֆիկական մոդել, գլոբուս, 2 պլաստիլինե մարդկային մարմիններ, արևի և մոլորակների նկարներով գլխարկներ, պարան, հեռադիտակներ:

Նպատակահարմար է պարապմունքն անցկացնել այնպիսի վայրում, որտեղ գետնին հնարավոր լինի գծել կավիճով: Պարապմունքից մի քանի օր առաջ դաստիարակի օգնությամբ երեխաներն ուսումնասիրում են աստղալից երկինք պատկերող նկար: Ցանկալի է, որ նրանք ծնողների օգնությամբ նախապես դիտեն գիշերային երկինքը՝ ուշադրություն դարձնելով աստղերի լուսավորվածությանը:

I մաս

Դաստիարակը ցույց է տալիս արեգակնային համակարգի քարտեզը և բացատրում դրա կառուցվածքը: Նա երեխաներին պատմում է, որ արևն էլ անամպ երկնքում, այնպիսի աստղ է, ինչպիսիք տեսնում ենք գիշերային երկնքում: Արևը մեզ ավելի մոտ է, այդ պատճառով էլ ավելի մեծ է երևում: Արեգակին մոտենալ հնարավոր չէ, քանի որ այն շատ տաք է, ունի շատ բարձր ջերմաստիճան: Հետո ցույց է տալիս քարտեզը և ասում, որ Երկիր մոլորակն էլ է պտտվում Արեգակի շուրջը:

II մաս

Երեխաները խաղում են շարժախաղ՝ «Արևը և մոլորակները»: Նրանք բաժանվում են երկու խմբի՝ մի խումբը աստղագետ-ուսումնասիրողներ են, մյուս խումբը՝ արև և մոլորակներ: Արև երեխան կանգնում է կենտրոնում: Մյուսները դաստիարակի օգնությամբ մոլորակների թվով շրջաններ են անում: Գլխարկները մոլորակներն են: Այդ կարգով երեխաները դասավորվում են ուղեծրի վրա: Դաստիարակը բացատրում է, թե ինչպես պետք է պտտվել արևի շուրջ: Կենտրոնում կանգնած երեխան պտտվում է իր շուրջը, իսկ մյուսները՝ իրենց ուղեծրերով: Երկրի շուրջ միևնույն ժամանակ պտտվում է լուսինը: Լուսնի դերը կատարող երեխան պետք է պտտվի և՛ Երկրի, և՛ Արևի շուրջը: Սկսվում է շարժումը: Աստղագետ-ուսումնասիրողները հետևում են բոլորի շարժմանը: Նրանք հեռադիտակներով նայում են և բացատրում մոլորակների շարժումները:

III մաս

Երեխաները նստում են աթոռներին: Դաստիարակը բերում է գլոբուսն ու լամպը: Հետո վառում է լամպը և ուղղում գլոբուսի վրա: Նա հարցնում է երեխաներին, թե որտեղ է ցերեկ, որտեղ՝ գիշեր: Հետո բացատրում է, թե ինչպես է տեղի ունենում ցերեկվա և գիշերվա փոփոխությունը: Դաստիարակը երեխաներին խոսելու հնարավորություն է տալիս: Այնուհետև նրանց ուշադրությունը հրավիրում է այն

հանգամանքին, որ գլոբուսի մի մասը լուսավորվել է լամպ-արևով (այդտեղ ցերեկ է), իսկ մյուս մասը ստվերում է (այդ ժամանակ այդտեղ գիշեր է): Դրանից հետո կրկին հարցնում է երեխաներին, թե ինչպես է տեղի ունենում ցերեկվա փոփոխությունը. ինչու է մի կողմը լուսավոր, իսկ մյուսը՝ ոչ:

Ուշագրավ հնար է կիրառվում. դաստիարակը գլոբուսի վրա ամրացնում է պլաստիլինե մարդուկին (Երևանի վրա) և սկսում դանդաղ պտտել գլոբուսը: Երեխաներին առաջարկում է հետևել այդ մարդուկին և հայտնել, թե երբ է քաղաքում լինում ցերեկ և երբ՝ գիշեր: Նա հարց է ուղղում երեխաներին, թե ինչ պետք է կատարի այդ մարդուկը՝ քնելու՞ է, թե՞ արթնանալու: Այնուհետև դաստիարակն առաջարկում է մարդուկին դնել մեկ այլ տեղ. միգուցե այնտեղ ցերեկվա և գիշերվա փոփոխություն չի՞ լինում: Կրկին պտտում է գլոբուսը, իսկ երեխաները ասում են, որ այդ վայրում լինում է ցերեկ և գիշեր: Դաստիարակը ցույց է տալիս Հայաստանը և ԱՄՆ-ը: Երբ Հայաստանում ցերեկ է, ԱՄՆ-ում գիշեր է, և հակառակը: Մի մարդուկին՝ Տիգրանին, դնում է Հայաստանում, իսկ Ջոնին ԱՄՆ-ում: Դաստիարակը երեխաներին առաջարկում է հետևել, թե ինչպես է պտտվում գլոբուսը: Նրանք պետք է ասեն, թե ինչ են անում այդ երեխաները (Ջոնը քնած է, իսկ Տիգրանը խաղում է, և հակառակը, Ջոնի մոտ ցերեկ է, իսկ Տիգրանի մոտ՝ գիշեր):

Պարապմունքի ավարտին դաստիարակը հարցերի միջոցով ամրակայում է հաղորդած գիտելիքները: Նա բոլոր պարագաները բերում է խմբասենյակ՝ առաջարկելով երեխաներին, որ իրենք կատարեն նույն փորձերը:

Ներկայացնում ենք պարապմունքի ևս մի մոդել: Դրա միջոցով նախադպրոցականը կձևավորի պատկերացումներ՝ ավազի, քարի և կավի մասին, կկարողանա համեմատել դրանք:

Ավազի, կավի և քարի համեմատություն

Ներառական պարապմունք

<u>Պարապմունքի նպատակը</u>

Սովորեցնել համեմատել նյութերը և նշել դրանց առանձնահատկությունները: Երեխաներին ծանոթացնել ավազե ժամացույցներին:

Անհրաժեշտ պարագաներ՝ քարեր, կավ, չոր ավազ՝ լցված ամանների մեջ, ավազե ժամացույց (1 և 10 րոպե), ջրով լի մեծ անոթ, տախտակներ՝ ծեփակերտելու համար:

I մաս

Երեխաները նստում են կլոր սեղանի շուրջ: Նրանք բաժանվում են 2 խմբի, և այդ երկու խմբերին դաստիարակը տալիս է անվանումներ: Յուրաքանչյուր խումբ ստանում է հանձնարարություն: Նրանք համեմատում են նյութերը՝ ավազը և քարերը, քարերը և կավը, կավը և ավազը: Այնուհետև սկսում են փորձարկել նյութերը: Քարերը և ավազը լցնում են ջրով լի ամանների մեջ՝ տեսնելու համար, թե ո՞րն է ծանր: Տարաների մեջ դրանք խառնում են, որպեսզի տեսնեն, թե ո՞րն է ավելի արագ սուզվում: Փորձարկելուց հետո կատարում են եզրակացություն, որ քարերը ավելի ծանր են, քան ավազը:

II մաս

Դաստիարակը երեխաներին բացատրում է, որ քարը, ավազը և կավը բնական նյութեր են: Դրանք օգտագործվում են մարդու կողմից ամենատարբեր աշխատանքներ կատարելու համար: Երեխաներին առաջարկում է բերել օրինակներ: Նրանց տեղեկացնում է ավազե ժամացույցի մասին. դնում է ավազե ժամացույցը, և երեխաները հետևում են ավազի շարժմանը: Այնուհետև առաջարկում է խաղ, որի ընթացքում երեխաները պետք է հետևեն 10 րոպեանոց ավազե ժամացույցին:

III մաս՝ խաղ:

Դաստիարակը երեխաներին հանձնարարում է 10 րոպեի ընթացքում ծեփակերտել տարբեր կենդանիներ, թռչուններ, Երկիր մոլորակը, Արևը, Լուսինը, աստղերը: Վերջում իրենց պատրաստած պատկերներով երեխաները ազատ խաղեր են կազմակերպում:

Նմանօրինակ պարապմունքները նպաստում են նախադպրոցահասակ երեխաների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Դրանց շնորհիվ բարձրանում է նաև նրանց հուզականությունը:[4]

[4] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես N 5, 2011թ., էջ 32:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն տվյալ թեմայի շուրջ՝ հանգեցինք մի շարք եզրակացությունների։

Նախադպրոցական կրթության բնագավառում կարևոր տեղ է զբաղեցնում էկոլոգիական դաստիարակությունը, որը որոշիչ նշանակություն ունի նախադպրոցականի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործընթացում։ էկոլոգիական դաստիարակությունը շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց է, ինչը երեխաներին հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում։ Էկոլոգիական կրթությունն անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված երեխաների էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը, բնապահպանական և բնօգտագործման ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի կայացմանը։

Մանկապարտեզը էկոլոգիական կրթության և դաստիարակության առաջին օղակն է, այդ իսկ պատճառով մանկավարժի առջև դրվել է կարևոր խնդիր՝ երեխաների մեջ ձևավորել ռացիոնալ բնօգտագործողի կուլտուրա։ Էկոլոգիական դաստիարակությունը մանկապարտեզում պետք է իրականացվի պարապմունքների և ռեժիմային մյուս պահերի միջոցով՝ իրականացնելով հետևյալ խնդիրները.

1. Արթնացնել սեր հայրենի բնության հանդեպ. նրանց ուղղորդել այնպես, որ կարողանան ընկալել և խորությամբ զգալ բնության գեղեցկությունը, հոգատար վերաբերմունք և խնամք ցուցաբերեն բուսական ու կենդանական աշխարհի նկատմամբ։
2. Ձևավորել տարրական գիտելիքներ և հմտություններ կենդանի ու անկենդան բնության վերաբերյալ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Մարության, Ա. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008թ.:

2. Ասատրյան Լ., Սարգսյան Փ., «Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը», Երևան, 2002թ.:

3. Ասատրյան Լ., «Էկոլոգիական այբբենարան», Երևան, 2006թ.:

4. Л. А. Каменева, Как знакомить дошкольнику с природой.

5. Գ. Մարտիրոսյան. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում, Երևան, 2007թ.:

6.Նախաշավիղ գիտամեթոդական հանդես N 5, 2011թ.:

7. Բակ-պարտեզը որպես ուսումնական միջավայր | Լուսինե Հովհաննիսյան (wordpress.com)